նա ներս մտաւ եւ դրեց այնտեղ իւր կառավարչին մի զօրագնդով հանդերձ։ Ապա Իյադ եկաւ Մանբէջ[1], որ Եփրատի վերայ է եւ նշանաւոր է իւր կամուրջով, եւ գրաւեց այն։ Այն Վարդայ՝ որ է Ռասէլայն քաղաքը, ուր նա դիմեց, դիմադրեց նորան, ուստի նա թողեց եւ եկաւ Թիլ Մաւզին[2], որ նա նուաճեց 19 թ. Ուռհայի խաղաղութեան հիման վերայ։ Իյադ ուղարկեց Հաբիբ Ի. Մասլամայ Ֆիհրիին Քարքիսեայ, որ առաւ այն՝ Ռաքքայի դաշնի հիման վերայ։ Իյադ նուաճեց Ամիդ[3] առանց ճակատամարտի՝ Ուռհայի խաղաղութեան հիման վերայ, նոյն օրինակ եւ Մայափարեկին, իսկ Կաֆարտութ[4] ամրոցը եւ Մծբին՝ կռուով, նոյն պայմանների հիման վերայ. նոյնկերպ Ցուր Աբդին, Մարդին ամրոցը եւ Դարայ[5], իսկ Քարդայ[6] եւ Բաղաբդայ՝ Մծբինի դաշնի հիման վերայ։

Նորա մօտ եկաւ Զաւազանի[7] իշխանը եւ խաղաղութիւն կապեց նորա հետ՝ իւր հողից նորան

---

1 Հնոց Ἱεράπολις (Ptol., Strabo, Gelzer, ibid. 872), Hierapolis (Amm. Marc.), այժմ Մեմբիջ, Ուռհայի եւ Հալէպի մէջ։

2 Jakut ունի Մաուզան (مَوْزَن) գրութիւնն։

3 Amida (Theoph. Byz., Amm. Marc., Ἄμιδα μητρόπολις (Gelzer, ibid. 910).

4 Istaxri եւ Jakut ունին նոյն كَفَرْتُوثا գրութիւնն. այժմ Kefr Tuth գիւղը, Մարդինից 5 ժամ հարաւ։

5 Մծբինի եւ Մարդինի միջեւ. Daras castrum quae Anastasiopolis (Theoph. Byz.), Δαρᾶς (Gelzer, ibid. 912), Δάραι (Procop.)։ Ինչպէս կ'աւանդէ Պրոկոպ. քաղաքս 501 թ. հիմնեց Անաստաս կայսրը, որ խոսրով Անուշիրվան 572 թ. նուաճեց։

6 Καρθάρα ? (Ptol. V, 17). թերեւս նոյնն է մեր մատենագրերի Կարթայ գիւղը յԱղձնիս։

7 Jakut կ'անուանէ "գեղեցիկ քաղաք, Հայոց լեռների, Խլաթի, Ամրպատականի, Դիար Բեկրի եւ Մոսուլի միջեւ, որոյ բնակիչք Հայեր են։